

Թերթը կը ղրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուրկարիա
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ

ՊԱՅՄԱՆՔ

Գլխովի տեղ
1/2 տոլար

Հասցե

DİRAN
PA PAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

2. ՏԱՐԻ

ԱՊՐԵԼ 13 ՇԱԲԱԹ 1902

ԹԻԻ 247

ԱԶԳԱՅԻՆ

Զատկական տօներու առթիւ Կայսերական հրամանաւ 250 ոսկի ղրկուած է Պատրիարքարան, որբերու և կարօտեալներու համար:

Յիշեալ գումարը՝ Կայսր. անձնական գանձուն նախարար Սպիրիդ Յովհ. Էֆէնտին անձամբ բերեր Պատրիարքարան յանձնէր է:

Ականակուռ Օսմանիէ պատուանշան՝ Օրմանեան Ս. Պատրիարքին:

— Մարտ 31 կիրակի օրը տեղի ունեցեր է Իզմիրի Ազգ. Հիւանդանոցի հարկւրամեայ Յուբիլեանի հանդէսը, Տ. Մելքիսեդեկ որբազանի նախագահութեամբ, 700է աւելի հանգիսականք ներկայ գտնուեր են: Այնչափ ազմկայոյզ պատրաստութիւններէ վերջը կատարուած ոոյն յոբիլեանին առթիւ ի նպաստ հիւանդանոցին գրչացեր է 350 ոսկիի զուտ շահ մը, 250 օխա պուլլուր և 50 օխա լուբիա:

Իզմիրի հայ հասարակութեան գէպի ազգային գործերը ունեցած անտարբերութեան խոշոր մէկ ապացոյցն է այս: Ամօթ իրենց:

— Բարեսէր անձերու նպաստներովը Զատիկ առթիւ 115 կանգուն կերպաս ղրկուած է Սոյ ժառանգաւորաց վարժարանը, աղքատիկ աշակերտներու մէյմէկ ձեռք ղգեստ շինուելու համար:

— Վանէն կը գրեն թէ, Ս. Գրիգորի ազգանց որբանոցը որ 16 որբուհիներով սկսած էր, այժմ 80 որբուհիներ կը պատապարէ: Մինչև հիմա 5 որբուհիներ ամուսնացած են, հինգ ալ մինչև եկող տարի պիտի ամուսնացնեն՝ իրենց կարգին: Մէկ տարիէն ուսումնաւարտներ ալ պիտի ընծայէ ազգին: Սոյն որբանոցին ի նպաստ զանազան քաղաքներու որբախնամ ընկերութիւններէ տարեկան ընդ ամենը 375 ոսկի կը հասնի:

ԲԱՑ ՆԱԽԱԿ

— Իււառուսի խմբագիր Պ. Գուրպէթիւն եւ Հոգաբարձութեան

Նախ պ. Գուրպէթիւն կը հարցնենք թէ ո՞վ իրեն ստիպեց ձեռք մը դնել բազմին մէջ մասնիշխ դուրս բերլով. ո՞վ իրաւունք տուաւ հանրագրողներո իրեն գործիք ընելու, որուն դէմ պիտի բողոքենք առանձին մեր պատիւն պաշտպանելու համար: Բ. նոյն 20րդ թւոյն մէջ ըսած է որ թաղական խորհրդոյ մէկ անդամը՝ «Տ1» անձնաւորութիւններն Ալիպային տուրք չի վճարողներ, այլ պարզապէս խռովութիւն յարուցանող անկարեօր անհատներ են, հետեւաբար պէտք չէ անոնց կարեւորութիւն տալ: արդէն մենք թաղականութեան հետ գործ չունինք, մեր հանրագրութիւնը միայն Հոգաբարձութեան ուղղուած էր, ու եթէ իրօք թաղ. խորհրդոյ մէկ անդամը այդպէս խօսք մը բռնած է, պ. Գուրպէթեան էն կը պահանջենք որ այդ անձին անունը լրագրին մէջ դրէ, ապա թէ ոչ ամօթ իրեն: Գալով Պատուարժան Հոգաբարձութեան, եթէ

պաշտօնապէս մեր հանրագրութեան պատասխան
չը տան. ինչպէս բերանացի խոստացած են, պի-
տի ստիպուինք վարժարանաց ընդհ. տեսչին դի-
մել 2-3 հարիւր ստորագրութեամբ և պիտի բո-
ղոքենք իրենց լուսթեան գէմ Ուստի խնդրոյն
այսպիսի ծանր կերպարանք մը չտալու. համար
կը խնդրենք որ ընդ. փոյթ պատասխանեն.

Խմբագիր Տէր, հաճեցէք հրատարակել մօ-
տակայ թվերէն միոյն մէջ, իմ և ընկերներուս
արդարացի իրաւունքները պաշտպանելու համար

Մնամ յարգանք
81 սոս ագրոյներէն
Մ. Էթիպիս

Յ. Գ. Մէկ օրինակ ալ ՇԱՐԺՈՒՄԻ խմբագ-
րութեան շնորհակալ եմ:

Վերջին պահուն ուրախութեամբ տեղեկա-
ցանք թէ քաղաքիս առաջնակարգ վաճառական-
ներէն Տիար Յ. Մալի. Չատիկի տութիւ տասնեմէկ
երկսեռ աղքատիկ աշակերտաց նուիրած է հա-
գուստ, կօշիկ և գլխարկ. փափաքելի է որ ուրիշ
կարող ազգայինք ալ ազնիւ նուիրատուին օրինա-
կին հետեին, իրենց ուրախութեան մասնակից
ընելով երկսեռ աղքատիկ մանկտին:

—Պագուցի աղա Եաղուպեան 1000 բուպի
խոստացեր է որբանոցի մը՝ արհեստանոցի վե-
րածման իբր տարեկան:

—Տփղիսէ կը գրեն թէ Ռուսիոյ վարիշ Ծե-
րակոյտը, իբրեւ վճարեկատեան, քննելով Տըփ
զիսի Հայոց Առաջնորդութեան բողոքը Կրթական
նախարարութեան ներկայացուցչին գէմ. իր մարտ
20 նստին մէջ արդարացի գտնելով Առաջնոր-
դարանը, վճար է որ Հայոց եկեղեցիին վերա-
դարձուին 52,000 լիւրայի արժէքով կալուածները
զոր նոյն նախարարութեան ներկայացուցչիւ գը-
րաւած էր իբրեւ գալոցական կալուած:

Կարենոյ ևն. երկրաշարժը

Կարենոյ առաջնորդէն ապրիլ 4 թուով Պատ-
րիարքարան եկած հեռագիր մը կը ծանուցանէ
թէ ապրիլ 3ին երկրաշարժի չորս զօրաւոր ցըն-
ցումներ եղեր են. Ժողովուրդը ահաբեկ՝ պարա-
զաներու մէջ կ'ապաստանի. փնտ միայն չէնքե-
րու:

ԿՍՄԻԹ

ՄԱԼԻՄ ԱՂԱՆ

Մալիւմ աղան ուր որ երթայ,
Ունեցածովը կը պարծենայ.
Կուզէ մինակ ինքը ճառէ՝
Իր խելքովը դատէ, վճռէ:

Եկեղեցի երբոր մտնէ՝
Երեսը միշտ խաչ կը հանէ.
Իւր լեցնէ, մոմ կը վառէ՝
Բազկատարած կիջնէ կելէ:

Քիթ բերանը կայլակերպէ,
Լալ ու զղջալ ազէկ կեղծէ.
Ձոր տեսնողը անյիտաբար
Կըսէ՝ «աս է մարդն արդար»:

Յետ աւարտման եկեղեցուն,
Թէ հանգստի աղքատ մէկուն.
«Մանրուք չունիմ, գնա՛» կըսէ,
Անգթօրէն խելծը մերժէ:

Եթէ ճամբան որբ մը տեսնէ՝
Գրպանները խառնել կելէ,
Արծաթ, պղինձ, չունիմ կըսէ
Խոշոյ ոսկի կը ցուցնէ:

Ձեռքը անցած յաճախորդին,
Խերն անիծէ, վառէ հոգին,
Կըսէ՝ «օրը իմ մէկ սակին
Ֆայիւզ բերէ քառսուն սանդիմ»:

Հօթէլ Տօպրիշ երբոր մտնէ՝
Ու պարզամիտ մարդիկ տեսնէ
Խիղճով գործել կը քարոզէ
Մինչ ինք խիղճը կ'ատնակոխէ:

ԴԻՏՈՂ

Բոժ. — Մալիւմ աղան ուր որ տեսնեմ,
Սա աղօթքը մտքէս կըսեմ.
«Ապրեցո՛ւ զիս Տէր դու, մարդէ
Չարէ, յառնէ անիրաւէ»:

ԲՈԺՈՒԿԻ ՆՈՒԵՐՆԵՐԸ

Այս տարի ալ Պ. Բոժոժիկ ԶԱՏԿԻ առթիւ հետեւեալ նուէրները կը շնորհէ իրենց հասցէներուն :

Արտասահմանի խմբագիրներուն — Անգղի հաւկիթներ, չիրար վար զարնելու և հալածելուն փոխարէն :

Հայ ժողովուրդին — Ոսկեղծեալ ու մէջը պարապ արուեստական հաւկիթներ, պոռտախօսութիւններէ միշտ խաբուելուն փոխարէն :

Տէրպապաններուն — Աղուէսի հաւկիթներ, կեղծաւորաբար ժողովուրդը շոյելուն փոխարէն :

Կեստրներուն — Ազգաւի հաւկիթներ, հարսերուն աչքը հանել ուղեւնուն փոխարէն :

Միամիտ օրիորդներուն — Սագի հաւկիթներ, չորսնոց պարսկներու հալածութեն ու խօսուածքէն խաբուելուն փոխարէն :

Խլամուլ կնիկներուն — Օձի հաւկիթներ, դրախտայի համար երիտասարդները երեւնուն փոխարէն :

Խաչապաղներուն — Տղրուկի հաւկիթներ, Հայ ժողովուրդին արիւնը քամելուն փոխարէն : (Ականջը խօսի Վասակ Սիւնիին)

Խանութպաններուն — Սատանայի հաւկիթներ, յաճախորդներին չարաչար խաբելուն փոխարէն :

Շիք միսիւններուն — Թիթեռնիկի հաւկիթներ, թիթեռնութեամբ ծանրաբեռնեալ ըլլալուն փոխարէն :

Տըռտըռ կնիկներուն — Կառկի հաւկիթներ, առտուրնէ մինչև իրիկուն գլախ ուռեցնելուն փոխարէն :

Մարիմ աղային պէս վաշխառուններուն — Պօա Օձի հաւկիթներ, ճանկը ձգած յաճախորդին ոսկորներուն ծովը անգամ քամել ուղեւնուն փոխարէն :

Տօնական օրերու մէջ եկեղեցիներուն արարողութիւնը խանդարող դպրոցական քարիծաղիկներուն — Գրգըլճըզի ծառէ շինուած երկայն հաւկիթներ :

Իսկ երկսեռ անմեղ տղաքներու և մեծերուն — Հաւի խաչած ալուրիկ հաղըրլօփ հաւկիթներ :

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆգրալար վէ շիւքնայէր . Մալիւմաթը ֆէննիյէ . Լուղաթը Լէթայիֆ . ֆէննի Էյլէն-ճէլէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշր օլունան մէզքիւր քիթապըն պիրինճի ճիլաի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլտէ սաթըլմոգտաւըր Թիյ 2 ֆրանք :

— օ —

ԱՍՏՂԻԿ ԵՒ ԵՐԷՑ



Աստղիկ . — Կեցիր . . . քանի որ «Սիրեցէք զմիմեան» կը քարոզէր, պէտք է դու ալ յարդեալ ըսածդ և անոր զոհեալ ալիքաթոռն լսկ . . .

Երէցն . (Յաղթահարեալ և դողդոջուն) — Եղիցին կամք քո . . . Բոժ . — Եղիցին և եղիցին . սուրբ ըսածնուն խաչը ծոցէն հանեցին .

ԶԱՆԱԶԱՆՔ

Ոսկրաւայի սովորութիւնը Աստուծոյ արքունիքին մէջ ալ կայ : Լատինական Աւագ Հինգշաբթի օրը ծերունի Ֆրանց-Եսէֆ կայսրը 12 ծերերու ստքը լուաց կայս. գլխակին մէջ Այս ծերունիները, որոնց երեքը 90 տարեկան էին, արարողութեան Դահլիճին մէջ նստած կը ստասէին : Ն. Վեհափառութիւնը կերակուր հրամցուց անոնց և իր ձեռքովը պնակները վերցուց : Արհիգութեան ալ իրեն կ'օգնէին : Քիչ վերջը ծերունիներուն կօշիկները և գուլպաները հանուեցան, և կայսրը ծունգի գալով լուաց և սրբեց անոնց իւրաքանչիւրին ոտքերը : Արարողութեան վերջը կայսրը ածած գրամով լեցուած մէյմէկ տոպրակ կախեց իւրաքանչիւր ծերունիի վրէժն : Արարողութեան ներկայ էին արհիգութեան, գրասէնները, գեղարարներ, զօրավարներ, ժողովականներ և պետական բոլոր բարձրաստիճան պաշտօնատարները : Ասիկայ հին սովորութիւն մըն է, որ ամէն տարի կը կատարուի :

«Կը ներեմ. Աստուծ ալ ինձի քող ներեմ» — Աւագ Ուրբաթ օրը Մատրիտի արքայական պալատի մատրան մէջ յաւաքեց արարողութիւն մը կոտորուեցաւ : Մարի-Քրիստինէ թագուհին խաշը համբուրելու պահուն երէցը Ն. Վեհափառութեան ներկայացուց արծաթէ ափսէ մը որուն վրայ սև ժապաւեններով կապուած 9 թուղթեր կային, որոնք 9 չարագործներու մահու վճար գիրներ էին :

— Տիկին, քսաւ երէցը, Ձեր Վեհափառութիւնը կը ներէ՞ այս գատապարտեալներուն :

Մարի-Քրիստինէ թագուհին յաւաքած ձայնով մը պատասխանեց :

— Կը ներեմ իրենց, Աստուծ ալ ինձի թող ներէ :

Այս սովորութիւնը գոյութիւն ունի Սպանիոյ արքունիքին մէջ երկար ժամանակէ ի վեր : Սակայն թագաւորը ձեռքը ափսէին վրայ տանելով վճարիրներուն մէկ հատը միայն կ'առնէր և ո՞ր գատապարտեալին որ ըլլար այն, նա միայն մահուան պատիժէ կ'ազատուէր : Երբ սակայն

Իզապէլլա Բ. գահ բարձրացաւ, աւագ Ուրբաթի իրիկուն մը առաջին անգամ ըլլալով յիշեալ արարողութեան պահուն իր երկու ձեռքերով ծածկեց ափսէին վրայի թուղթերը գոչելով :


— Կը ներեմ ձեզ ամէնուրեք առանց բացառութեան, և թող Աստուծ ալ գթա իմ վրաս և ներէ ինձի :

Այդ ժամանակէն ի վեր Աւագ Ուրբաթ օրը արքայական գթութեան մատուցուած ամէն մահու վճարիր առանց բացառութեան կը ջնջուին և Իզապէլլա Բ ի տուած զեղեցիկ օրինակը միշտ կը յարգուի :

— Թանկագին Ընծաներ տրուել են Հռոմայ Պապին՝ անժողովականութեան 25րդ տարեդարձին առթիւ : 28 թագ, 319 խաշականախաշ, 1200 ոսկի ու արծաթ բաժակ, 81 ագամանդեայ մատանի, 16 գաւազան ոսկեգլուխ և միւրիկէի հարուստ պապականներէն մէկը՝ ծանրագին ընչատուի մը՝ մէջը 2500 ֆր. ի փոխգիր մը դրած :

Շուները Ֆրանսայի մէջ. — Գիտէ՞ք թէ ֆրանսայի մէջ շան համար տուրք մը վճարելու է. եթէ կ'ուզէք պահապան շուն մը պահել, պէտք է վճարէք տարին 5 ֆրանք, իսկ եթէ զարդի համար է ձեր շունը, կը վճարէք տարին 10 ֆր : Այսօր ֆրանսայի մէջ կը գտնուին 2 940.945 է աւելի շաներ. քսա վերջին վիճակագրութեան, զարդի շաներուն թիւն է 800.000 : Անցեալ տարի ֆրանսական կառավարութիւնը շաներու երեսէն վստակած է (իւր տուրք) 8.800 000 ֆր. բսել է ամէն մէկ շուն 3 ֆր. շահ ձգեր է : Վերջապէս հաշիւ եղած է որ մարդ գլուխ 7 շուն կրնայ եղեր :

Շատակերներու խնձոյք մը տրուել է Լեհաստանի Վարշովա քաղաքին մէջ, հարսնիքի մը առթիւ : Հրաւիրեալները ամենքե ալ Լեհ՝ 5 օր շարունակ, երբեմն քանալով ու երբեմն սեղանին գլուխն անցնելով կերեր խմեր նա՛ 1 եղ. 8 հորթ, 50 խոզ, 40 սագ, 130 բազ ու հաւ, 30 տալառ գարեջուր, 10 տալառ օղի, 50 շիշ քոնեաք, բացի գինիէ :



ԳԴՏԱԿԱՆ-ԲԱՔՈՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հիմնում անցնալ դարուն մէջ ի ֆամալթրա,
ինայոզական «ՏԱԿԱՌԵԱՆ» ընկերութեան կողմէ:

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԹԻԻ 100

«Նա որ գինեւան մէջ կիյնայ»
2ի մեռնիր, այլ կը գինովնայ»
Տօրթ. Թօրթուեան

Պարոն Իսկէնտէրիտիս Տայրեանիս, 35 տարեկան,
մեռալ 1867 ի Թամզարա, մերձ ՚ի բաղարին կեսարիոյ
և պիտի մեռնի 1954 յաւուրն տօնի Գենարիոսի գի-
նեմովն և մէզէ-տիւշմանը կուռնեկիոսի հետեւողին:

Կրօնք «Նոյ Նահապետեան»: Աւարտած է Ա. Բ.
Գ. դասերը Գիտական-Բաքոսական Ակադեմիին մէջ և
ստացած է սոյն վկայագիրը:

1. Գինեական և բելիւսական ճիւղին մէջ. . ֆա-
ջալաւ.
2. Գարեջրականին մէջ. . ֆաջ.
3. Օղի, մաստիք, բօնեաք, բառկա պիւրէն եւ
թիւյ աէլիշտիրէն տեսակներու մէջ. . ֆաջալաւագոյն.
4. Ցեխերու մէջ նկարչութիւն և պատէ ի պատ
սալլանթըլը այցելութիւն. . Յոյժ գովելի,
5. Հաշուակալութիւն լիթրաներու, շիշերու եւ
թէֆերու. . Միջակ.
6. Որսորդութիւն (ջուրի, ցամաքի եւ երկնքի
մէջ) . . Կէլիշի կիւլէլ.
7. Տեսնուիւնքեան ճիւղին մէջ. . Անկարեոր.
8. Խաղաժողութեան մէջ. . Տկար.
9. Բրէֆա, պիլարտ, թավլու, թուղթ տօ-
մինա. . Թամանակ չուրի, չի բաներ.
10. Կուսարարական ճիւղ. . ֆաջ, վախ-
կոտ, չկրնալ փախչող.
11. Զրիակներութիւն մէզէններու. . Ըստ բա-
ւականին.

12. Ճարտարախօսական (ժամերով ճոռոմարա-
նութիւն) . . Խիստ քաջալաւ:

13. Վճարուէն պարտքի. . Օժուզ պաշիէն չօլագ
Վերատեսուէ Ակադեմիոյ

ԿՆԻՔ

Տօրթ. Բօկրատ



Գիտո. 1. — Սոյն վկայագիրը ունեցող գինեմուլը,
որուն ստրբերը չեն հնազանդիր գիները տուն տանելու,
իրաւունք ունի գործածել «Գ՛ուս Գարտաշքմ» գեղագի-
րը, ո՛ւր որ ալ գտնուելու լլլայ այն պահուն, առնե-
լով «չորքօտանիլ» մը դիրքը: Ու յետոյ հանգարտ մը
երկնալ բնանալ: Այսպիսի ակադեմիստ մը պէտք է
վստահ լլլայ որ երկինք կը հսկէ իր վրայ և պիտի ու-
ղարկէ իրեն ոստիկան մը, կամ պահնորդ մը՝ շալկած
կամ պօֆրոֆ առապաւնիով ոստիկանատուն տանելու
համար, ուր համաձայն օրինաց՝ պարտական չէ՝ վճարել
«Լաքաւ քաւաւը»: Եթէ հոն կամ ճամբուն վրայ
տանջուի պետական պահնորդներէ՝ իրաւունք ունի ըստ
սահմանադրութեան բժշկական անկուտի վկայական
պահանջել թաղապետութեան բժշկէն և վանոնք ենթար-
կել գատի՝ որոնք զինքը ենթարկած էին փատի: Ասոր
համար դատարանն ալ պիտի օգնէ՝ ձրի պաշտպան—
փառտարան մը տալով իրեն:

Գիտ. 2. — Սոյն վկայագիրը ունեցող շնչաւոր
կոճղ մը (քիւթիւկ) իւր պարտականութիւնները կատա-
րած միջոցին, առանց ուզելու, եթէ մեռնի, նոյն իսկ
գինեւան մէջ, իր ընկերները ներկայ պիտի գտնուին
անոր յուղարկաւորութեան, որոնց աչքերն ու քիթեր-
նին կարծած պիտի լլլան իսպիրթօյին զօռէն, եւ ո-
րոնք հետեւեալ Բաքոսական մաղթանքով պիտի կնքեն
անոր գերեզմանը:

Ո՛վ Աստուած, աղաչեմք գրեզ,

Տօւր գինի և բէլին մեզ.

Այս բարիք շնորհէ դու,

Իշկէմպէնիս լաւ մը լայնցու.

Մինչև հինգ քիլօ պարտկեն,

Օղի, գինի, բօնեաք, մէզէն:

Տե՛ս, որգիրդ կը պաղատին՝

Կոնակնին տըւած տակաօին.

Դու այնպէս մը կարգաէրէ

Որ կիրակի օրը գոնէ

Անձրեկ տեղ տաս մեզի,

Առատ գինի և օղի:

Թարգմ.

ԱՐԾԻԻ

ՍՊԱՍՈՒՀԻՆ ԴԺՍՈՒՀԻ

— 0 —

1889ին Անգղիոյ մէջ երիտասարդ Լորտ մը, իրիկուան մը գէմ խիստ մտադրազ վիճակի մէջ խորունկ ջրանցքի մը եզրը պտտած ատեն, դժբաղդարար ոտքը սահելով ջրանցքին մէջ կիշնայ: Թէեւ Անգղիացիք մարմնամարդի մէջ խիստ ճարպիկ բլբալու յաւակնութիւնն ունին, բայց Լորտը լողալ չի գիտնալուն, ի զո՞ւր ջուրին մէջ կը տապալկէր: Անյուսալի էր իր փրկութիւնը, եթէ արի շինական մը օգնութեան չը հասնէր, որ լսեր էր անոր յուսահատ ճիչերը. այս ագնութասիրտ եւ քաջարի շինականը ատենց հագուստները հանելու, կաշմակի արագութեամբ ջուրը կը նետուի եւ կազատէ Լորտը, գրեթէ անկենդան վիճակի մէջ. եւ իւր հուժկու ձեռքերովը շփելով ընկղմեալին մարմինը, խելքը գլուխը բերելէն ետքը, զայն իւր փառաւոր դղեակը կը փոխադրէ, ուր բժշկաց ճարտարութեամբը քիչ ատենէն կը գտնէ իր ապաքինութիւնը:

Հաբաթ մը ետքը, Լորտը փնտռել գտնել կուտայ ագնութասիրտ շինականը, որ թէեւ թշուառ վիճակ մը ունէր, այլ կը մերժէր ո եւ է դրամական վարձատրութիւն: Լորտը չկրնար համոզել թէ, գոնէ իւր գնելիք մէկ փոքրիկ ագարակն ընդունի. «Ո՛չ», կը կրկնէ շինականը:

— Բայց վերջապէս, կը գոչէ Լորտը, պէտք է գիտնաք սիրելի բարեկամս, թո՛ւ ուխտած եմ դործնականապէս յայտնել ձեզ երախտագիտութիւնս իմ կեանքըս անխուսափելի մահուանէ մը ապառնելով համար. ուրեմն առանց բաշտելու՝ ինչ որ կուզէք խնդրեցէ՛ք ինձմէ, զի կեանքս ձեզի կը պարտիմ:

— Մո՛յ Լորտ, կըսէ այն ատեն շինականը, քանի որ կը պնդէք ինձ հաճելի վարձատրութիւն մը ընել...

— Այո՛, այո՛, սիրայօժար...

— Ուրեմն...

Եւ կը վարանի:

— Բայց մի՛ վարանիք, աներկիւզ խօսեցէ՛ք.

— Ուրեմն... ես քոյր մը ունիմ, որ ի Լոնտրոն տան մը մէջ մի քանի տղայոց գայեակի (սաւսա) պաշտօն կը վարէ. եւ որ շատ կը նեղուի այն փոքրիկ անասակներուն ձեռքը:

— Լաւ, ուրիշ պաշտօն մը գտնենք իրեն:

— Բայց Մո՛յ Լորտ, քոյրս պարկեշտ աղջիկ մ'է. վասն զի, ինչպէս որ գիտէք, վերջապէս սպասուհի մ'է

եւ իրենցմէ ամենէն հառատարիմ՝ ու պարկեշտներըն իսկ երբեմնի կը բաժնասուին. դանոնք ուղած կողմերնին քաջող անխիղճներ շատ կը գտնուին:

— Ճշմարիտ է. ուրեմն ի՞նչ պէտք է ընել:

— Ա՛ռաջարկեմ... որ իւր ձեռքը խնդրէք, հետը ամուսնանաք, եթէ սակայն հաճոյ թաւի ձեզ:

Հարկ չէ ըսել թէ, ի լոր այս տառաջարկին, Լորտը ափ ի բերան կը մնայ, բայց յիշելով իւր ուխտը, շինականին հետ ուղղակի կերթայ ի Լոնտրոն, կը տեսնէ անոր քոյրը, որ հրապուրիչ գեղեցկութեան, միանգամայն եւ պարկեշտութեան տիպար մէր, ու առանց վայրկեան մը իսկ վարանելու, անոր ձեռքը կը խնդրէ:

Երեկի այն փոքրիկ սպասուհին այսօր դքսուհի եղած է:

— 0 —

ԴԵՐԱՍԱՆ ԵՒ ԻՇԽԱՆ

Նշանաւոր կատակերգակ Պ. Միշէլ երբ Մօնաքօ կը գտնուէր, որ մը իշխանին պալատը կանչուեցաւ:

— Ստո՛յգ է, Պ. Միշէլ, հարցուց անոր Մօնաքօս յի իշխանը, թէ քու ընտրած բոլոր գերերուդ մէջ ամենէն աւելի հաճոյք կգգաս իմ նմանութիւնս ընելով, այնչա՞փ կատարելութեամբ:

Պ. Միշէլ խոնարհաբար ներում կը խնդրէ, եւ կը խոստովանի թէ, արդարեւ ընկերութեան մը մէջ յանգգներ էր իշխանին նմանութիւնս ընել:

— Ուրեմն, կըսէ իշխանը, որպէս թէ տակաւին նոյն ընկերութեան մէջ էք, բրէ՛ք տեսնեմ իմ նմանութիւնս:

Միշէլ՝ իշխանին բարեհաճութենէն քաջալերեալ, այս հրամանը կրկնել չի տար, եւ իշխանին քաջաւածքը, շարժումները, ձեւերը ու ձայնը ճշմարտապէս նմանցընելով:

— Սենեկապետ, կըսէ, հրժա անմիջապէս 1000 մարք վճարեցէ՛ք Պ. Միշէլի, որ մեր թատրոնաց լուսագոյն պերսամաններն մին է:

Հարկ չէ ըսել թէ, իշխանը, որ խնդալէն կը մարէր, իր նմանողին հրամանը իսկոյն գործադրել տրուաւ:



ՏԵՄԵՐԻՐ

Ս. Ժանն Բոժոժիկ եւ Ընկ.

Գահիրէ

Ռուստինայէն հոս եկող Զինծիրճեան Գար-
րիէլ քահանան՝ գլուխը շուրջառաւ մը գնելով ժա-
մագործոնթեան սկսաւ:

Քառագէշան

«Զէնկինտէն ալըրըն ֆուխարէյէ վէրիւրիս»
վերադարձաւ. կը յայտարարէ թէ՝ «կէթտիք
պատխամաւորական ժողովք եարտուխ՝ աղտոտ-
լարը սապօնսույ թէմիլլէտիւն, խարարլարըմը-
ղէ կիլլի՝ սախլամայա խարար վէրտիւն, (Բոժ.—
չուվալլարը նէ՝ եարտընը) իշլէրի սըրասընա
խօյտուխ, գալգտըն կէլտիւն, արթըն հէր
պիր շէյ պիթտի:

Բոժ.— Վէսսէլամ, արթըն Հայաստան տա-
խուրթուլտու:

Քամչաթքա

Ամսական 50 ֆրանքով թէ՝ լուսարարու-
թիւն, թէ՝ սարկաւազութիւն եւ թէ՝ դպրութիւն
ընդին հացին աչք տնկող «անիրաւունք»ի հե-
տաքրիրին որոշուեցաւ ԲԱՐԻ ԵԿԱՐ, Ըսել:

Նոյն

Զարպհանէլեան գրատունը որ Զատիկի առ-
թիւ ներսով դրսով նորոգուեցաւ ու ներկուեցաւ
20 սանդիւմ՝ օրականով շէֆերճի պօզմասի տիւր-
կէրի մը միջոցաւ, որոշեց Հ. Զոհերը անուն
չքշուելիք գիրքը քիւօն 20 փարայի ծախել՝
մէջը յետեկ բաթտելու համար:

Քամչաթքա

Խելացի գաւիթ մը Զատիկէն վերջը պիտի
ամուսնանայ օտարուհիի մը հետ, պոսկէն առաջ
մտնելով աւանդական... իսպիրթօյի Քըլիկ:

Ուրեցա ֆըթֆըթ

Սօքա սաղաւեան հաճի աղան՝ աղքատիկ կը-
նոյ մը տունը գաղապարով մտած ատենը՝ ճիւղ-

պէին բէշը դրանը առան մնալով հրաշառապէս
խայտառակուեցաւ:

Բոժ — Շնորհաւոր ըլլալ:

ՀՈՌՈՐ ՏՈՒՏՈՒԻՆ ԻՂՁԸ

(Խթումի իրիկունը)

—

Էյ հաճի աղաս, Զատիկինիս էկաւ,
Արթըն ամառուան տուննէր պայուեցաւ.
Ուսպարիս լեյուն, չէն մնայ քէսէյ,
Մաննիկիս էլլար խէրով մէկ խըսմէթ:

Գիտես եա իշթէ Միշինքին թամամ
Էսունը կոխեց, ինտո՞ր չի խնդում.
Պօյ պօսը սիւլիւն, ծովի պէս մազեր,
Ասանկ աղւորը ո՞ր մանչը չառներ:

Անցած օր ժամը ո՞վ քի տեսաւ նէ՝
«Խերը տես, ըսաւ, բէք լօխմա բան է.
«Բիթը պերանը թօփիկ կլորիկ,
«Թըպիւր մօրը պէս չիւրն ըսընտիկ:

Ծաներնիս կտրենք, նահ, իշթէ կուգայ,
Խօսք խօրաթանիս չելլէ իմանայ.
Գիտես ա ետքը էրես առնէ նէ՝
Աղջիկան համար բէք աղւոր պան չէ:

Քա Մաննիկ ո՞ւր ես, ներս եկուր խուշըս,
Քիրիստոս յարեաւ, ծառք պագ աղջիկս.
Հարըդ աս գիշեր քեզի հէտիյէ
Տեղին կոճակը բօթին պերեր է:

Հացդ կե՛ր, պառկէ՛, քի վաղը առտու,
Կանուխ արթննաս, էլլաս հագուելու.
Հար, մար ու աղջիկ, իշթէ իրեքնիս՝
էլլանք ժամ էրթանք, ընենք ուխտերնիս:

Անկէ ետքը գանք հացերնիս ուտենք,
Քիչ մը քնանանք, յոգնութիւն առնենք.
Իրիկուան դէմ ալ կէնէ իրեքնիս,
Բանայիր երթանք, ընենք ճիւղպիւշնիս:

ՆԿԱՐՀԱՆՈՒԿ

0 49



2



Պարտք ու



ը տ



ՊԱՅՔՆ

էր



էր պահք ուտիք

Առաջին անգամ կարգացողին նախն է
«կոնտախուրի մէհեանը» անուն դիտական ու հե-
տաքրքրաշարժ վիպառանութիւն մը:



ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թէեւ Տապրիչը Պուլկարիոյ պզտիկ քաղաք-
ներէն մէկն է, ուր նկարչութեամբ և լուսանը
կարչութեամբ կը պարապիմ. ու թէեւ գտնուած
միջավայրս շատ յարմար չէ յառաջգիւծութեան,
բայց միշտ աշխատած եմ արհեստիս գիտական
և արուեստական ամենավերջին կատարելագոր-
ծութեանց քայլ առ քայլ հետևիլ, որուն շնորհիւ
այսօր ունիմ արուեստին վերջին կատարելութեամբ
բը օժտուած գործիքներ որոնց հետեան նկարչու-
թեան արհեստիս շնորհիւ կարող եմ արտագրել
ակադեմիստի ամենակատարելագործեալ պատ-
կերներ, զոր մտանաւոր կերպով մշակած եմ, և
որուն մէջ նկարչութիւնը մեծ գեր կը խաղայ:
Ստիկա փորձելը դժուար չէ, կրնաք Ձեր մէկ լու-
սանկարը զրկել իմ հասցէիս և պատի ստանաք
մեծագիրը յորինակին ճիշդ նման, միայն 15 ֆը-
րանքի փոխարէն, այն ալ պատկերը ստանալէ
և հաւնելէ վերջը վճարելու պայմանով: Իսկ ա-

նոնք որ կտաւ ի վրայ իւզաների՝ բնական գոյնե-
րով պատկերնին կուզեն ունենալ, պէտք է գա-
ղափար մը տան գոյնին նկատմամբ, (երեսի,
աչքերու, մազերու և հագուստի գոյնը) բնական
մեծութեամբ, 35 ֆր. ի փոխարէն, վերոյիշեալ
պայմաններով:

Թէեւ շատեր ակադեմիստն պատկերներ կը
պատրաստեն, բայց ես կը վստահեցնեմ որ ոչ
մէկինը կրնայ այնչափ կատարելագործուած ըլ-
լալ որչափ նկարչի մը պատրաստածները. վա-
սընդի առանց կանոնաւոր ուղղուելի՝ ոչ մէկ ակ-
ադեմիստն արժէք կրնայ ունենալ:

Յարգանք

Ն. ՈՒՍԱԿԵԱՆ

Նկարիչ-Ֆոթոկրաֆ ՏՈՊՐԻՉ



ԾԱԽՈՒԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին:

Լուսինեան. Իշխան — Ֆրանսահայ Բաւարան
դին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինտլեան — Տեւական և գործնական
Քերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ոսկէս ֆր.

Շէյքսպիրի Համլէթը, ոչ բերդ. 2 50 ֆր.

Թրթռումներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովասուն " " 25 "

Արտասուլթոր " " 20 "

Բաղդախաղ պատկեր 25 սնդ.

Թաղաքեալ Փիլիկ աղբոր հարսնիքը 60 սնդ.

Բարեկենդանի անկոտորները, կատակախաղ
արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, գօմէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Գաղանճ գօճա եախօտ էնֆիյլճի, գօմէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность" — Варна